ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 3-Լ

«09» 01 2024 թ.Ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 41 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ դատախազության կանոնադրության փոփոխությունները, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կառուցվածքը՝ համաձայն հավելված N 1-ի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազության կառուցվածքը՝ համաձայն հավելված N 2-ի:
3. Հաստատել Հայաստանի Հանրապետության դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ցանկը՝ համաձայն հավելված N 3-ի:
4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազության կառուցվածքը, Հայաստանի Հանրապետության դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ցանկը հաստատելու ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 9-ի N 19 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 41 հրամանը:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

6. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

7. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազին, Երևան քաղաքի դատախազին, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, մարզերի, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա. Կ. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**

Հավելված N 1

ՀՀ գլխավոր դատախազի
«09» 01 2024թ.

N 3-Լ հրամանի

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը կազմված է՝

1) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հետևյալ հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներից՝

1) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն,
2) Բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն,
3) Կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն,
4) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով վարչություն,
5) Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն,
6) Մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն,
7) Միջազգային-իրավական համագործակցության վարչություն,
8) Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչություն,
9) Պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն,
10) Պետական շահերի պաշտպանության վարչություն,
11) Սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն,
12) Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն,
13) Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն:

2) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազներից և դատախազներից:

Հավելված N 2

ՀՀ գլխավոր դատախազի
«09» 01 2024թ.

N 3-Լ հրամանի

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ

1. **Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունը կազմված է՝**

1) Զինվորական կենտրոնական դատախազությունից,
2) Արարատի կայազորի զինվորական դատախազությունից,
3) Գեղարքունիքի կայազորի զինվորական դատախազությունից,
4) Երևանի կայազորի զինվորական դատախազությունից,
5) Թիվ 1 կայազորի զինվորական դատախազությունից,
6) Թիվ 2 կայազորի զինվորական դատախազությունից,
7) Լոռու կայազորի զինվորական դատախազությունից,
8) Շիրակի կայազորի զինվորական դատախազությունից,
9) Սյունիքի կայազորի զինվորական դատախազությունից:

2. **Զինվորական կենտրոնական դատախազությունը կազմված է զինվորական դատախազի տեղակալներից, զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազներից և դատախազներից, զինվորական կենտրոնական դատախազության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներից, ներառյալ՝**

1) Զինվորական ծառայության դեմ ուղղված հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության բաժին,
2) Կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության բաժին,
3) Պետական շահերի պաշտպանության բաժին:

Հավելված N 3

ՀՀ գլխավոր դատախազի
«09» 01 2024թ.

N3-Լ հրամանի

ՑԱՆԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

1. Անձնակազմի կառավարման վարչություն,
2. Արարողակարգի վարչություն,
3. Տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկման և անվտանգության ապահովման վարչություն,
4. Ֆինանսատնտեսական վարչություն՝
1) հաշվապահական հաշվառման բաժին,
2) գնումների համակարգման բաժին,
3) նյութատեխնիկական ապահովման բաժին.
5. Առաջին բաժին,
6. Արխիվի բաժին,
7. Ընդհանուր բաժին,
8. Իրավաբանական բաժին,
9. Հանրային կապերի բաժին,
10. Քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման բաժին,
11. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությանն աջակցող բաժին,
12. Բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանն աջակցող բաժին,
13. Կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչությանն աջակցող և վիճակագրության բաժին,
14. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով վարչությանն աջակցող բաժին,
15. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությանն աջակցող բաժին,
16. Մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանն աջակցող բաժին,
17. Միջազգային-իրավական համագործակցության վարչությանն աջակցող բաժին,
18. Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչությանն աջակցող բաժին,
19. Պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանն աջակցող բաժին,
20. Պետական շահերի պաշտպանության վարչությանն աջակցող բաժին,
21. Սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանն աջակցող բաժին,

22. Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանն աջակցող բաժին,

23. Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանն աջակցող բաժին,

24. Զինվորական կենտրոնական դատախազության տարածքային վարչություն,

25. Երևան քաղաքի դատախազության տարածքային վարչություն,

26. Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազության տարածքային բաժին,

27. Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազության տարածքային բաժին,

28. Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության տարածքային բաժին,

29. Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության տարածքային բաժին,

30. Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության տարածքային բաժին,

31. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության տարածքային բաժին,

32. Շենգավիթ վարչական շրջանի դատախազության տարածքային բաժին,

33. Արագածոտնի մարզի դատախազության տարածքային բաժին,

34. Արարատի մարզի դատախազության տարածքային բաժին,

35. Արմավիրի մարզի դատախազության տարածքային բաժին,

36. Գեղարքունիքի մարզի դատախազության տարածքային բաժին,

37. Լոռու մարզի դատախազության տարածքային բաժին,

38. Կոտայքի մարզի դատախազության տարածքային բաժին,

39. Շիրակի մարզի դատախազության տարածքային բաժին,

40. Սյունիքի մարզի դատախազության տարածքային բաժին,

41. Վայոց ձորի մարզի դատախազության տարածքային բաժին,

42. Տավուշի մարզի դատախազության տարածքային բաժին,

43. Արարատի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին,

44. Գեղարքունիքի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին,

45. Երևանի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին,

46. Թիվ 1 կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին,

47. Թիվ 2 կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին,

48. Լոռու կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին,

49. Շիրակի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին,

50. Սյունիքի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին: